ՆԱԽԱԳԻԾ-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___» _____ 2011թ. N_____ -Ա

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 3–րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն՝

1) սեփականության իրավունքով <<Սահակյանշին>> ՓԲԸ-ին պատկանող Երևանի Բաբաջանյան փողոցի հ.3/3 հասցեում գտնվող 4300.0քմ մակերեսով հողամասի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 06.11.2007թ. հ.2352643 վկայական) 177.46քմ և 38.74քմ՝ ընդհանուր 216.2քմ մակերեսով հատվածը կից տարածքից, Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 177.46քմ և 38.74քմ, ընդհանուր 216.2քմ մակերեսով հողամասի,

2) սեփականության իրավունքով Սվետլանա Սարգսյանին պատկանող Մոլդովական փողոցի հ.51/2 հասցեի տնամերձ հողամասի հյուսիսային սահմանագծում գտնվող 22.8քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.08.2008թ. հ.2488892 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Մոլդովական փողոցի հ.51/2 հասցեի արևելյան հատվածում գտնվող 22.8քմ մակերեսով հողամասի,

3) սեփականության իրավունքով <<Դալմա Ինվեստ>> ՍՊԸ-ին պատկանող Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 2 հասցեի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 11.01.2010թ. հ.2704258 վկայական) 120000.0քմ մակերեսով հողամասից 853.5քմ մակերեսով հողամասը, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հարակից 853.5քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

## <<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>>
## Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի հունվարի 27-ի հ.375-Ա որոշման համաձայն Բաբաջանյան փողոցի հ.3/3 հասցեում գտնվող <<Սահակյանշին>> ՓԲԸ-ին պատկանող 4300.0քմ մակերեսով հողմասը բաժանվել է երկու գույքային միավորների՝ 4083.8քմ և 177.46քմ և 38.74քմ ընդհանուր 216.2քմ մակերեսով հատվածների: Դադարեցվել է նշված հասցեում 177.46քմ և 38.74քմ ընդհանուր 216.2քմ մակերեսով հողամասի նկատմամբ <<Սահակյանշին>> ՓԲԸ-ի հողօգտագործման իրավունքը և նշված հողամասերը փոխանակվել են կից տարածքից համարժեք 177.46քմ և 38.74քմ ընդհանուր 216.2քմ մակերեսով հողամասերի հետ: Նույն հասցեում գտնվող 704.27քմ մակերեսով հողամասն ընդլայնման նպատակով, կադաստրային արժեքով լրացուցիչ օտարվել է ընկերությանը:

Երևանի քաղաքապետի 2009թ. հունվարի 27-ի հ.375-Ա որոշումից ծագող իրավունքը պետական գրանցում չի ստացել:

2. Երևանի քաղաքապետի 2009թ. հունվարի 27-ի հ.376-Ա որոշմամբ Մոլդովական փողոցի հ.51/2 հասցեում, Սվետլանա Սարգսյանին պատկանող տնամերձ հողամասի հյուսիսային սահմանագծում գտնվող 22.8քմ մակերեսով հողամասը փոխանակվում է նույն հասցեի արևելյան հատվածից 22.8քմ մակերեսով համարժեք հողամասի հետ:

Երևանի քաղաքապետի 2009թ. հունվարի 27-ի հ.376-Ա որոշումից ծագող իրավունքը պետական գրանցում չի ստացել:

3. Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ Ծիծեռնակաբերդի խճուղու հ.3 հասցեում ճանապարհային հատվածի բարեկարգման, ասֆալտապատման նպատակով կատարվել են շինարարական աշխատանքներ, որի արդյունքում խախտվել են <<Դալմա Ինվեստ>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 120000.0քմ մակերեսով հողամասի սահմանները, Ծիծեռնակաբերդի խճուղու վերակառուցման հետևանքով <<Դալմա Ինվեստ>> ՍՊԸ-ին պատկանող հողամասից ճանապարհի կազմակերպման նպատակով օգտագործված հողամասի փաստացի մակերեսը կազմում է 853.5քմ, որի փոխարեն հարակից տարածքից առաջարկվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող համարժեք հողամաս տրամադրել ընկերությանը:

Քննարկվող հողամասերը համապատասխանում են ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չեն նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում:

Ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է <<Սահակյանշին>> ՓԲԸ-ին, Սվետլանա Սարգսյանին և <<Դալմա Ինվեստ>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի հետ փոխանակելու համար տալ համաձայնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## << ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## << ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ